Արձանագրություն N 2
ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով սպիտակ մագնիսական գրատախտակի և մարկերների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23.04.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ
ա) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2019 թվականի ապրիլի 23-ին ժամը 11:30-ին:
բ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	01548908
2	<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ	02584897

գ) մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Նախահաշվային արժեքը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	2	3		4	5	6
<<Սմարթլայն>> ՍՊԸ	1	Սպիտակ մագնիսական գրատախտակ	65000	54166.67	10833.33	65000
<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ				26666.67	5333.33	32000
<<Սմարթլայն>> ՍՊԸ	2	Մարկերներ	6000	1166.67	233.33	1400
<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ				1250	250	1500

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Չափաբաժին 1		
Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ	բավարար
2	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար

Չափաբաժին 2		
Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար
2	<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին և <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

---------- Տ. Ղուկասյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան